

Գիւղիս բարձունքէն կմեկնին թնդանօթին այն եօթը ձայներն, զորս երբ լսենք՝ մեր անկողիներէն կցատկենք եւ փողոցը կը վազենք հասկնալու համար, թէ հրդեհն ո՛ւր է:

Նաւավարներն երբեմն գիւղիս մէջ անանկ կտակներ կ'ընեն ազգին, որ կարծես թէ կատակ կ'ընեն. նաւավարի մը ըրած կտակն մեր ամենէն հարուստներն իսկ չեն ըներ, ուսկից կհետեւի թէ գիւղիս մէջ ազգասիրութեան կրակը վառ է միշտ:

Գիւղիս օդն եւ ջուրն այնքան առողջարար են, որ եթէ մէկը շաբաթ մը մնայ հոս՝ հետեւեալ շաբթուն կպարտաւորի թիկնաթոռն փոխելու եւ աւելի ընդարձակն գնելու:

ԻԹ.

ԵԷՆԻ ՄԱՀԱԼԷ ՍԱՄԱԹԻՈՅ

Այս թաղը Սամաթիոյ ձագն է եւ ամեն նկատմամբ իւր հօրը կնմանի:

Հոս ալ թաղականի կռիւները պակաս չեն, բայց հրաշագործ Մկրտիչ եպիսկոպոսի շնորհիւ այժմ կռիւները առաջուան պէս մշտնջենական չեն, այլ առժամանակեայ: Վարժարանին գալով՝ յայտնի է, որ թաղային վեճերու մատնուած թաղի մը վարժարանն գոհացուցիչ չկրնար ըլլալ:

Թաղիս այրերն եւ կիներն ազգային զգացում ունին. միջին դասէն ըլլալով՝ շողոքորթութիւն չեն գիտեր եւ ճշմարտութիւնն բարձրաձայն կխոստովանին:

Այրերն օդին կսիրեն, ինչպէս նաեւ գինին. ասոր համար շատերն իրենց հետը լապտեր կ'առնեն, որ եթէ ուշանան գինետան մէջ՝ մութուն չստիպուին երթալ իրենց տուները:

Հրաշագործը հոս հրաշքներ կ'ընէ եւ հիւանդներ կրժշկէ:

Օդը լաւ է, բայց թաղեցին օդէն աւելի դրամը կսիրէ:

Լ.

ՆԱՐԼԸ ՔԱՐՈՒ

Աղքատ թաղ մ'է:

Ժամանակաւ քանի մը հարուստ վաճառականներ իրենց մէջ հոգաբարձութիւն մը կազմելով՝ թաղին վարժարանը կկառավարէին. իսկ մէկօերկու տարիէ ի վեր այդ հոգաբարձութիւնը լուծուած է, եւ թաղեցին ինք իր գլխուն կկառավարէ իւր վարժարանն, որ ինչպէս յայտնի է՝